# Սովետական Հայաստանի նկարիչները



# Հայրենական մեծ պատերազմին

75(47.925)(064) 1414
Ց-94 Ցուցահանդես
Հայաստանի Սովետական
նկարիչները

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ, ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԵՐՊԱՐ-ՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱ-ՐԻՉՆԵՐԻ ՏՈՒՆ

75(47.925)(064)

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

# ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՆԿԱՐԻՉՆԵՐԸ— ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

A 2923

ԵՐԵՎԱՆ ★ 1942

# ВЫСТАВКА

**Советские художники Армении — Великой Отечественной войне**

ЕРЕВАН ★ 1942

Իր միասնականությամբ հզոր՝ Սովետական երկիրը հայրենական մեծ պատերազմ է մղում ընդդեմ մեր հարազատ հողի սրբազան սահմանների վրա չկտի և ուխտադրուժ կերպով ոտնձգություն արած ֆաշիստական բարբարոսների:

Օրեցօր աճում և բազմանում է սովետական մարտիկների անհողդողդ ուժը, նրանք հզոր և միաձույլ շարասյունով անցնում են ահեղ հարձակման: Հարված-հարվածի հետևից հասցնելով, նրանք մահացու պարտության են մատնում վայրագ և արյունարբու թշնամուն, դուրս վռնդելով նրան Սովետական Միության սահմաններից:

Հանճարեղ Ստալինը, բոլոր ժամանակների զորավարներից այդ խոշորագույնը, ղեկավարում է մարդկային պատմության մեջ անօրինակ այս պայքարը, և նրա անունն է ոգևորում անմահ սխրագործություններ գործելու՝ սովետական ժողովրդի անձնազոհ զավակներին:

Ժողովրդական հերոսությունը, հայրենիքին նվիրվածությունը և նրա խիզախ պաշտպաններին է նվիր-

ված «Հայաստանի սովետական նկարիչները՝ Հայրենական Մեծ պատերազմին» ցուցահանդեսը:

Սիրելի առաջնորդի՝ Ի. Վ. Ստալինի և նրա ամենամերձավոր զինակիցների՝ Մոլոտովի, Վորոշիլովի, Բերիայի և Մալենկովի ազնիվ կերպարանքներն են դրոշմված «Պաշտպանության Պետական Կոմիտե» գեղարվեստական կտավի վրա (նկ. Ե. Սաֆարյանի գործը): Անկեղծ, մեծ զգացմունքի ջերմությամբ է վերստեղծած Ի. Վ. Ստալինի կերպարանքը նրա կիսանդրում (գործ արվ. վաստ. գործիչ Ա. Սարգսյանի), ստալինյան թեմատիկայի գեղանկարչական արտադրություններում (գործ նկ. Գ. Սողոմոնյանի), նկարիչներ Գ. Ալեխսյանի, Գ. Բրուտյանի և Պ. Գևորգյանի գրաֆիկական աշխատանքներում, գեղարվեստական հյուսված գորգում (գործ՝ Գ. Ղարանֆիլյանի):

Քաղաքացիական պատերազմի և նրա ականավոր զորավարների ու ռազմագետների սխրագործություններին են նվիրված ցուցահանդեսի կոմպոզիցիոն երկու գեղանկարչական կտավները—«Ի. Վ. Ստալինը և Կ. Ե. Վորոշիլովը Ցարիցինի ճակատում» (գործ արվ. վաստ. գործիչ Ս. Առաքելյանի) և «Ի. Վ. Ստալինը, Կ. Ե. Վորոշիլովը և Ս. Մ. Բուդյոննին Ցարիցինի ճակատում» (գործ Պ. Սիմոնյանի):

Զուսպ և խիստ գեղանկարչական գամմայով է տրված նկարիչ Ե. Սաֆարյանի՝ Սովետական Միության մարշալներ՝ ընկ. ընկ. Վորոշիլովի, Բուդյոննու և Տիմոշենկոյի առնական հզորակուռ խարակտերները:

Ցուցահանդեսի գեղանկարչական խոշոր աշխա-

տանքներից ուշադրության է գրավում «Մոսկվայի պաշտպանությունը» մոնումենտալ բազմաֆիգուր պաննոն (գործ՝ ժող. նկ. Մ. Սարյանի, նկ. Խ. Եսայանի, Բ. Բուրդյանի բրիգադի), որի հիմնական մոտիվն է սովետական մայրաքաղաքի հսկայական Կարմիր հրապարակը ահեղ ալիքով ծածկող տանկային մասերի ելույթը։

Դաժան անհողդողդությամբ են շնչում մարտիկների հաղթահար դեմքերը, մարտական սխրագործությունների պայծառ փառքով է նշված նրանց կերպարանքները, ջախջախիչ ուժով են շարժվում նրանց երկաթյա լեգիոնները։

Հեռվում, երեկոյան աղոտ մթնշաղում հազիվ երևում են գլասա Մոսկվայի ուրվագծերը, հինավուրց Կրեմլի վեհապանծ աշտարակները, իսկ առջևը, իբրև վսեմ հայրենասիրության մարմնացում՝ բրոնզյա Մինինը ձեռքի համարձակ շարժումով պայքարի է կոչում՝ իր ժողովրդի ազատության համար։

Իր գեղանկարչական արժանիքներով արժեքավոր պաննոն խորը զգացմունքով տալիս է մարտական առօրյայի ահեղ մեծությունը և դաժան իրադրության լարվածությունը։

Հերոսական էնտուզիազմի բոցով է տողորված երկրորդ պաննոն — «Լենինգրադի պաշտպանության համար» (արվ. վաստ. գործիչ Ս. Առաքելյանի, Օ. Զարդարյանի և Մ. Տիրատուրյանի բրիգադ)։ Ընդհանուր մաժոր տոնը, ֆիգուրների բազմազանության առատությունը և Լենինգրադի հոյակապ ճարտարապետության հզորությունը, հիանալով գաղափարա-

կան մտադրության խորությունը՝ որը հանդիսավոր տոնականություն է տալիս պաննոյի կոմպոզիցիային։

«Բալթիական Կարմիր Ռազմա–ծովային Նավատորմի» մարտական հզորության թեման վարպետորեն արտահայտված է երրորդ պաննոյում (գործ՝ արվ. վաստ. գործիչ Գ. Գյուրջյանի)։

Պայծառ էմոցիոնալ բնույթ են կրում մյուս երեք խոշոր պաննոների գեղանկարչական կոմպոզիցիան՝ սովետական ժողովրդի հերոսական պայքարը՝ Լենինի—Ստալինի հաղթական դրոշի տակ—թեմայի շուրջը (գործ՝ նկ. Մ. Աբեղյանի, Ս. Թարյանի, Ա. Ծաքարյանի և Ա. Միրզոյանի)։

Սովետական ժողովրդի խիզախ հերոսների քաջարի սխրագործություններին և բարձր հայրենասիրությանը նվիրված գեղանկարչական ստեղծագործություններից ցուցահանդեսում աչքի են ընկնում Բ. Քոլոզյանի «Հեծելազորի գրոհը», Ս. Ղարագյոզյանի «Դոնորները», Խ. Եսայանի «Մարտական ընկերուհիները», Մ. Տիրատուրյանի «Պատրաստում են տաք հագուստ Կարմիր բանակի համար», Վ. Գայֆեջյանի «Սովետական տանկիստի սխրագործությունը» և բազմաթիվ այլ աշխատանքներ։

Մեր հարազատ Կարմիր բանակի սիրելի մարտիկների և հրամանատարների համարձակ և անհողդողդ կերպարանքը ճշմարտացի և արտահայտիչ կերպով տալիս են ցուցադրված դիմանկարային գեղանկարչության բազմաթիվ օրինակները՝ Սովետական Միության հերոսներ ընկ. ընկ. Գրոմովը և Գրիզոդուբովան (նկ. Ա. Սաղինյան), «Գաստելլո» (նկ. Դ. Մխի–

թարյան), «Բրինկո» (նկ. Ս. Ղարադյոզյան) և Սովետական Հայաստանի հերոսական մարտիկների, քաջարի զավակների դիմանկարները—«Պ. Ղազարյան» (գործ ժող. նկ. Մ. Սարյանի) և ուրիշները:

Ժողովրդական հերոսության և ժողովրդական քաջարիության օրինակներ տրված են ցուցահանդեսում նաև քանդակագործական ստեղծագործություններում:

Դինամիկ, հերոսական թափով լի «Պարտիզան» քանդակն ստեղծված է էպիքական մեծ խառնվածք ունեցող՝ արվեստի վաստակավոր գործիչ Ա. Սարգսյանի ձեռքով:

Ուժեղ և արտահայտիչ է իր շարժման մեջ արվ. վաստ. գործիչ Ս. Ստեփանյանի «Դեպի պարտիզանները» քանդակագործական խումբը: Քաջարի «Պարտիզանի» կերպարանքն է տվել շնորհալի Ս. Մանասյանն իր քանդակի մեջ:

Գ. Կեպինովը ճշմարտացի և կենդանի կերպով է տվել Սովետական Միության հերոս, ստալինյան հպարտ բազե, անվախ օդաչու Վ. Տալալիխինի առնական կերպարանքը՝ իր կոմպոզիցիոն դիմանկարի մեջ: Քանդակագործական մյուս ստեղծագործություններից ցուցահանդեսում ուշադրության են գրավում Ա. Ուրարտուի, Ա. Ստեփանյանի, Թ. Զորեքչյանի և ուրիշների աշխատանքները:

Կարմիր բանակի և սովետական ժողովրդի մարտական քաջարիության մասին պատմում են հայ գրաֆիկ նկարիչների գործերը — ժող. նկ. Հակոբ Կոջոյանի ««Սասունցի Դավթի կրտսեր եղբոր»՝ ընկ. Ս. Գրիգորյանի հարձակումը թշնամու մոտոցիկ-

չխաի վրա», «Ընկեր Ավագյանի սխրագործությունը», նաև Մ. Աբեղյանի, Ա. Ղարիբյանի, Ա. Գասպարյանի, Է. Սարգսյանի և մյուսների գործերը: Խիստ սուր սարկազմով լի են Մ. Բաղդասարյանի՝ անարգ Փաշիստ պարագլուխների դիմանկարները և ծաղրանկարները:

Քաղաքական սրությամբ և տպավորիչ ուժով են նշված ցուցահանդեսում դրված մարտական պլակատների մեծ մասը (ժող. նկ. Կոջոյանի, նկ. Թ. Բեդրոսովի, Ծ. Հովհաննիսյանի, Ա. Մամաջանյանի, Ա. Չիլինգարյանի և մյուսների աշխատանքները):

Սովետական արվեստը խնամքով է վերաբերվում յուրաքանչյուր ստեղծագործական անհատականությանը, ստեղծագործական թարմ ույժերի յուրաքանչյուր նոր արտահայտությանը: Ցուցահանդեսում կան շատ նոր անուններ, շատ նոր խոստումնալից և շնորհալի արվեստագետներ: Գեղանկարչության մեջ այդպիսիներն են Է. Իսաբեկյանը, Վ. Աղաբաբյանը, Կ. Ղազանչյանը և ուրիշները, քանդակագործության մեջ՝ Կ. Նիկողոսյանը, Գ. Չուբարյանը և մյուսները:

Նկարչի վրձինով, քանդակագործի փորիչով, ինչպես և մարտիկի հրացանով, սովետական մարդիկ պայքարում են իրենց հայրենիքի անկախության, պատվի և ազատության համար: Մոտակա հաղթանակի այդ հավատունքը, որն զգում է սովետական ողջ ժողովուրդը՝ իր պայծառ մարմնացումն է գտնում ցուցահանդեսում գեղանկարչական կտավների աշխույժ, օպտիմիստական բովանդակության մեջ, քանդակագործու-

թյան ուժեղ, արտահայտիչ պաթետիկայում, գրաֆիկական աշխատանքների սուր դինամիկայում։

Ցուցադրված արտադրությունների քանակի լայնածավալությամբ և գեղարվեստական թեմատիկայի բազմազանությամբ՝ «Հայաստանի սովետական նկարիչները Հայրենական Մեծ պատերազմին» ցուցահանդեսը ակնառու ցուցանիչ է հայ նկարիչների ստեղծագործական աճի, պայծառ ապացույց նրանց խորաթափանց մոտեցմանը՝ դեպի մեր հերոսական օրերի բարձր հայրենասիրական թեման։

Ողջ մարդկության մոլի թշնամու՝ ֆաշիզմի դեմ սովետական ժողովրդի մղած կատաղի պայքարի այս ահեղ մոմենտին բացված ցուցահանդեսն իր գեղարվեստական հուզիչ կերպարներով բարձրացնում է ժողովրդական լայն մասսաների ստեղծագործական ոգին, ի մի է հավաքում նրանց գիտակցությունը, ուժեղ կերպով կոչում է դեպի նոր հաղթանակներ, դեպի նոր սխրագործություններ ի փառս սիրելի սովետական հայրենիքի և խոշոր հաղթանակների հզոր ոգեշնչողի՝ հանճարեղ Ստալինի։

Մ. ԲԱՐԵՆՁԻԿՈՎ

# ԿԱՏԱԼՈԳ

## ԸՆԴՈՒՆՎԱԾ ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐ

*կ.—կտավ*

*յուղ.—յուղաներկ*

*թ.—թուղթ*

*մ.—մատիտ*

*պ.—պաստել*

*ած.—ածուխ*

*գ.—գուաշ*

*գր.—գրիչ*

*Յուրաքանչյուր անվան դիմացի թվերը նշանակում են էքսպոնատի չափերը սանտիմետրներով՝ բարձրություն, լայնություն և խորություն:*

## ԱԲԵՂՅԱՆ Մ. Մ.
(Ծէանշանակիր)

1. Լենինի—Ստալինի դրոշով առաջ դեպի հաղ-թանակ—*պաննո, կտ. յուղ.* 300×200

2. Լենինի—Ստալինի դրոշով առաջ դեպի հաղ-թանակ—*պաննոյի էսքիզ, թ. գ.* 48×32

3. Պարտիզաննե՛ր, առաջ—*թ. ած. ճր.* 18×48

4. Պարտիզաններ—*թ. ած. ճր.* 38×48

5. Գրոհ—*թ. սեպիա* 26×38

6. Հերոս օդաչուի մահը—*թ. սեպիա* 26×38

7. Հրետանավորներ—*թ. ած. ճր.* 33×48

8. Ֆաշիստների գազանությունները—*թ. սեպիա* 26×38

9. Հանուն հայրենիքի—*թ. ած. ճր.* 33×34

10. Ֆաշիստների գազանությունները— *թ. սեպիա* 26×28

## ԱԳՐՅԱՆ Լ. Ս.

11. Հեծելազորի գրոհը—*կտ. յուղ.* 57×68

## ԱԽԻԿՅԱՆ Վ.
(Արվեստի վաստ. գործիչ)

12. Գրոհ—*թ. գուն. մատիտ* 44×58

## ԱՂԱԲԱԲՅԱՆ Վ. Կ.

13. Պարտիզանուհին օգնություն է ցույց տալիս վիրավորվածին—*կտ. յուղ.* 77×100

## ԱՌԱՔԵԼՅԱՆ Ս. Ա.
(Արվեստի վաստ. գործիչ)

14. Ի. Վ. Ստալինը և Կ. Ե. Վորոշիլովը Ցարիցինի ճակատում—*կտ. յուղ.* 133×94
15. Պարտիզանների հարձակումը—*կտ. յուղ.* 95×133

Նկարիչների բրիգադա՝

ԱՌԱՔԵԼՅԱՆ Ս. Ա. (արվ. վաստ. գործ.)
ՁԱՐԴԱՐՅԱՆ Օ. Մ.,
ՏԻՐԱՏՈՒՐՅԱՆ Մ. Թ.

16. Լենինգրադի պաշտպանության համար—*պաննո— կտ. յուղ.* 200×300

## ԱՎԱԳՅԱՆ Ս.

17. Բարձունքի գրավումը—*կտ. յուղ.* 41×59

## ԱՎԵՏԻՍՅԱՆ Գ․

18․ Ի․ Վ․ Ստալին—*թ․ մատ․* 24×24
19․ Ի․ Վ․ Ստալին—*թ․ մատ․* 20×31
20․ Ի․ Վ․ Ստալին և Ս․ ՕՐՋՈՆԻԿԻՁԵ—*թ․ մատ․* 32×25

## ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Մ․ Մ․

21․ Գեբելսյան պրոպագանդայի անիվը գործում է—*թ․ տուշ* 20×20
22․ Մոսկվայի զոոպարկը մոտիկ ապագայում — *թ․ տուշ* 26×29
23․ Ֆյուրերի «ճարպիկ» հետախույզները — *թ․ տուշ* 17×25
24․ Երեք մոմենտ—*թ․ տուշ* 17×25
25․ Հիտլերի «քաղաքակրթությունը» — *թ․ տուշ* 30×44
26․ Գեբելսի հիստերիկ կոչերը—*թ․ տուշ* 27×44
27—35․ «Զտարյուն ռասայի» «զտարյուն» ներկայացուցիչները (*Ծաղրանկարային գծանկարներ*) — *թ․ մատ․* 31×43

## ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Ս․

36․ Հանուն հայրենիքի—*գիպս*

## ԲԵԴՐՈՍՈՎ Ռ․ Ս․

37․ Կապիտան Գաստելլոյի հերոսական սխրագոր–

ծությունը—*թ. ած.* 49×69

38. Մարտ օդում—*թ. ած.* 67×51

39. Գրոհ—*թ. ջր.* 34×52

40. Հանուն հայրենիքի, հանուն Ստալինի—*պլա-կատ*—*թ. ջր.* 61×44

41. «Սովետական Հայաստանի նկարիչները հայրենական մեծ պատերազմին» ցուցահանդեսի կատալոգի շապիկը—*թ. տուշ* 19×13

42. «Սովետական Հայաստանի նկարիչները հայրենական մեծ պատերազմին» ցուցահանդեսի աֆիշայի էսկիզը—*թ. տուշ* 60×35

## ԲԵՋԱՆՅԱՆ Ն. Կ.

43. Կարմիր-բանակայինը դահուկների վրա—*գիպս* 38×43×20

44. Պարտիզանուհի—*գիպս* 35×10×9

45. Հանուն հայրենիքի—*գիպս* 67×21×23

## ԲՐՈՒՏՅԱՆ Գ. Ա.

46. Վ. Ի. Լենին—*լինոգրավյուրա* 23×26

47. Ի. Վ. Ստալին—*լինոգրավյուրա* 23×26

48. Վ. Մ. Մոլոտով—*լինոգրավյուրա* 23×26

49. Կ. Ե. Վորոշիլով—*լինոգրավյուրա* 20×27

50. Տրոֆեյ—*լինոգրավյուրա* 18×24

51. Գրոհ—*լինոգրավյուրա* 20×30

52. Պարտիզանները ֆաշիստական բանակի թիկունքում—*թ. գր.* 20×30

53․ Պարտիզանների հարձակումը՝ փաշիստական տանկերի վրա—թ․ ջր․ 20×30

54․ Դիվերսանտների ձերբակալումը—թ․ ջր․ 20×30

55․ Ֆաշիստական շտաբի ոչնչացումը—թ․ ջր․ 20×30

56․ Գնդացրավորներ—թ․ ջր․ 20×30

57․ Սնայպերական կրակ—թ․ ջր․ 20×30

58․ Թշնամու թնդանոթով թշնամու դեմ—թ․ ջր․ 20×30

59․ Տանկիստի հերոսությունը—թ․ ջր․ 20×30

60․ Օդային մարտից հետո—թ․ ջր․ 20×30

## ԳԱՍՊԱՐՅԱՆ Ա Ն․ Վ․

61․ Պարտիզաններ—թ․ տուշ 32×42

62․ Փոխարինենք մեր ամուսիններին ու եղբայրներին—լիտ․ 38×55

63․ Հարձակում թշնամու տանկի վրա—թ․ տուշ 32×42

64․ Առաջին օգնություն—թ․ տուշ 32×42

65․ Թշնամու դեսանտի ոչնչացումը—թ․ ած․ 40×58

## ԳԱՍՊԱՐՅԱՆ Ս․ Ա․

66․ Պարտիզաններ—լիտ․ 38×49

67․ Կրծքով պաշտպանենք հայրենիքը—լիտ․ 38×49

А 2923

## ԳԵՎՈՐԳՅԱՆ Պ.

68. Ի. Վ. Ստալին—*թ. տուշ* 31×24

69. Տանկային գրոհ—*թ. գուաշ* 45×32

70. Գրոհ բարձունքը գրավելու համար—*թ. տուշ* 12×20

71. Հետախույզներ—*թ. գուաշ* 21×18

72. Հանուն հայրենիքի, հանուն Ստալինի—*թ. յղ.* 70×60

## ԳՅՈՒՐՋՅԱՆ Գ. Մ.

(Արվեստի վաստ. գործիչ)

73. Բալթիկի ռազմա-ծովային նավատորմը — *պաննո* 200×300

## ԳՐԻԳՈՐՅԱՆ Հ. Ա.

75. Սովետական ժողովուրդների ռազմական ուժը —*պլակատ*, *թ. յղ.* 65×47

## ԳՐԻԳՈՐՅԱՆ Գ.

76. Թալան—*կտ. յուղ.* 50×60

## ԴԱՆԻԵԼՅԱՆ Դ. Տ.

77. Դիտակետում—*պլաստ.* 28×14×18

78. Սովետական մայր—*գիպս* 55×20×18

## ԽՍԱՅԱՆ Խ. Ա.

79. Հրաժեշտ—*կտ. յուղ.* 93×102
80. Մարտական ընկերուհիներ—*կտ. յուղ.* 45×53

## ԽՍԱՅԱՆ Խ. Ա. ԵՎ ՔՈԼՈՋՅԱՆ Բ. Ա.

81. Ընկ. Գրիգորյանի սխրագործությունը— *կտ. յուղ.* 60×75

## ԶԱՐԴԱՐՅԱՆ Օ. Մ.

82. Զէնքն ապասում—*կտ. յուղ.* 65×72
83. Մարդասպաններ—*կտ. յուղ.* 58×85
84. Պարապմունքից հետո—*թ. պաստել* 46×67
85. Հակաֆաշիստական ցույց—*թ. պաստ.* 46×67

## ԹԱՐՅԱՆ Ս. Մ.

86. Առաջ հանուն հաղթանակի—*պանոն. կտ.* 200×300
87. Առաջ հանուն հաղթանակի—*պաննոյի էսքիզ, թ. պաստ.* 40×55
88. Հրաժեշտ—*գիպս* 50×20×30
89. Հարցաքննություն—նկարազարդում Ն. Զարյանի «Վրեժ» պիեսի—*կտ. յուղ.* 35×50

## ԽՍԱՔԵԿՅԱՆ Հ. Ա.

90. Պարաշյուտային դեսանտ—*կտ. յուղ.* 145×105

## ԻՍԱՐԵԿՅԱՆ Է. Ա.

91. Ազատագրված գյուղում—*կտ. յուղ.* 45×54

## ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ Ի.

92. Թշնամու հետքով—*բարելյեֆ, գիպս* 66×82
93. Պարտիզանուհի—*գիպս.*

## ՂԱՐԱՆՖԻԼՅԱՆ Դ. Գ.

94. Ընկեր Ստալինի դիմանկարը —*գորգ* 135×185

## ՂԱՅՖԵՋՅԱՆ Վ. Ն.

95. Սովետական տանկիստի սխրագործությունը— *կտ. գուաշ.* 42×72

## ԿԻՊԻՆՈՎ Գ. Ի.

96. Սովետական Միության հերոս Վ. Տալալիխին — *էտյուդ կոմպոզիցիայի համար, պլաստիլին* 50×16×16

## ԿՈՋՈՅԱՆ Հ.

(ժող. նկարիչ, շքանշանակիր)

97. Ֆաշիստական մարոդյորներ—*թ. գ.* 45×64
98. Ընկեր Ավագյանի հերոսական սխրագործությունը—*թ. գ.* 45×64

99· «Սասունցի Դավթի կրտսեր եղբոր»՝ ընկեր Ա· Գրիգորյանի հարձակումը ֆաշիստական մոտոցիկլիստի վրա—*թ· գուաշ* 45×64

100· Հանուն հայրենիքի, հանուն Ստալինի — *պլակատ*, *թ· ջր·*

## ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Վ·

101· ՀՕՔՊ-ի պարապմունքը—*թ· ած·* 44×60

## ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Շ·

102· Ֆաշիզմը սով է և աղքատություն—*պլակատ*, *յու·* 67×49

## ՀՈՎՍԵՓՅԱՆ Գ·

103· Դեսանտի ոչնչացումը—*կտ· յուղ·* 70×56

## ՂԱՐԻԲՅԱՆ Ա· Ս·

104· Ֆաշիստական դեսանտի ոչնչացումը—*գուաշ* 42×50

105· Հայրենական պատերազմի մասնակից ընկեր Ավետիս Եղիազարյանի պորտրեն—*սեպ·* 25×15

106· Կապիտան Գաստելլոյի հերոսական սխրագործությունը—*ած·* 50×40

107· Հայրենական պատերազմի մասնակից ընկեր Շչեբիկով (կայմիկ)—*սեպ·* 25×15

108· Պարտիզաններ—*թ· յուղ·* 50×42

109. Հետախուզություն—*թ. գ.* 40×30

110. Ծովային մարտ—*թ. գ.* 40×30

111. Օդային մարտ—*թ. գ.* 25×35

112. Կարմիր բանակի հարձակումը—*թ. տ.* 25×35

113. Ռազմա-ծովային նավատորմը արշավանքում—*թ. գ.* 30×40

114. Ֆաշիստական տանկի ոչնչացումը—*թ. լին.* 25×30

## ՂԱԶԱՆՋՅԱՆ Կ. Վ.

115. Թշնամու թիկունքում—*կտ. յուղ.* 55×70

## ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ ՀԱՅԿԱԶ

116. Հրաժեշտ—*կտ. յուղ.* 60×70

117. Գունավոր մետաղ՝ պաշտպանության ֆոնդին—*կտ. յուղ.* 61×61

118. Պատանի պարտիզանը—*կտ. յուղ.* 61×71

## ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ ՍԵԴԱ

119. Դոնորներ—*կտ. յուղ.* 83×68

120. Սովետական Միության հերոս Պ. Ա. Բրինկո — *կտ. յուղ.*

## ՄԱՄԱՋԱՆՅԱՆ Ա. Պ.

121. Գրոհ—*օֆ.* 40×30

122. Թշնամու վրա—*լին.* 50×65

## ՄԱՆԱՍՅԱՆ Ս․ Մ․

123․ Պարտիզան—*գիպս* 175×40×40

## ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Ս․

124․ Ռռնահարված պատմի համար—*գիպս* 27×26×26

## ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Ռ․

125․ Հերոսություն—*կտ․ յուղ․* 70×61

## ՄՈՒՐԱԴՅԱՆ Հ․

126․ Պարտիզաններ—*կտ․ յուղ․* 82×105

## ՄԽԻԹԱՐՅԱՆ Գ․

127․ Ընկ․ Բուդյոննու դիմանկարը—*կտ․ յուղ․* 68×83

128․ ՍՍՌՄ—ի հերոս Գաստելլոյի դիմանկարը — *կտ․ յուղ․* 68×83

## ՆԻԿՈՂՈՍՅԱՆ Ն․ Բ․

129․ Ոմբակոծություն—*գիպս* 10×30

130․ Հանճարփոր աշխարհազորականը—*գիպս* 11×11×36

131․ Ուզբեկուհի—*գիպս* 35×11×11

132. Պարտիզանուհի—*գիպս* 36×11×11
133. Ֆաշիզմի սարսափները—*գիպս* 31×14×15
134. Պարտիզան—*պլաստ.* 32×25×10
135. Ժամանակակից Եվրոպան—*գիպս* 32×35×19
136. Կրակեցեք, միևնույն է, չե՛մ ասի—*պլաստ.* 29×9×10

## ՉՈՐԵՔՉՅԱՆ Թ. Ս.

137. Հաղթանակը մերը կլինի—*գիպս.*
138. Աշխարհագրական—*գիպս.*
139. Կարմիր-բանակայինը—*գիպս*, *Փոր.*

## ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ Ա. Ա.

140. Վրիժառուներ—*կտ. յուղ.* 100×135

## ՉՈՒԲԱՐՅԱՆ Ղ.

141. Առաջին օգնությունը—*գիպս* 25×13×18

## ՊԱՐՈՆՅԱՆ Գ. Գ. (ԳՈՒՐՈՍ)

142. ՍՍՌՄ մարշալ Ս. Մ. Բուդյոննին դաշտային շտաբում—*կտ. յուղ.* 55×70

## ՊԵՏՐՈՍՅԱՆ Գ.

143. Պարտիզաններ—*կտ. յուղ.* 60×72

## ՌԱՃՄԱՋՅԱՆ Ս. Տ.

144. Պարտիզանների գրոհը—*կտ. յուղ.* 62×83
145. Վիրավոր պարտիզանը—*կտ. յուղ.* 66×87

## ՍԱՎԱՅԱՆ Ե. Մ.

146. Պաշտպանության պետական կոմիտեն—*կտ. յուղ.* 200×170
147. Ընկեր Ստալին—*կտ. յուղ.* 90×60
148. Ընկեր Ստալին—*կտ. յուղ.* 90×60
149. Ընկեր Վորոշիլով—*կտ. յուղ.* 120×60
150. Ընկեր Մոլոտով—*կտ. յուղ.* 120×60
151. Սովետական Միության մարշալներ՝ ընկեր-ներ Տիմոշենկոն, Վորոշիլովը և Բուդյոննին — *կտ. յուղ.* 66×90
152. Ֆաշիստների գազանությունները—*կտ. յուղ.* 50×65

## ՍԱԳԻՆՅԱՆ Ա. Ա.

153. Սովետական Միության հերոս ընկ. Գրիզո-դուբովայի դիմանկարը—*կտ. յուղ.* 86×65
154. Սովետական Միության հերոս ընկ. Գրոմովի դիմանկարը—*կտ. յուղ.* 58×81
155. Պարտիզաններ—*կտ. յուղ.* 58×81
156. Սոցիալիստական աշխատանքի հերոս ընկեր Կոստիկովի դիմանկարը—*կտ. յուղ.* 81×58

### ՍԱՐԳՍՅԱՆ Ա. Գ.

157. Պիոներները օգնում են կոլխոզի բերքահավաքին—*յուղ.* 31×44

158. Առաջին օգնություն վիրավորվածներին — *յուղ.* 31×44

### ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԱ Մ.

(Արվեստի վաստ. գործիչ, շքանշանակիր)

159. Ի. Վ. Ստալին—*կլոանդրի, գրանիտ*

160. Պարտիզան—*գիպս*

### ՍԱՐԳՍՅԱՆ ԷԴ. Գ.

161. Պարտիզանները թաքստարանում—*կտ. յուղ.* 74×102

162. Թշնամու գումակի ոմբակոծումը—*կտ. յուղ.* 103×90

163. Վրիժառուներ—*թ. գ.* 46×60

164. Վիրավոր հրամանատարը—*թ. գ.* 48×63

165. Մոսկվայի մատույցներում—*թ. գ.*

166. Կապիտան Գաստելլոյի սխրագործությունը—*թ. ած.* 38×50

167. Վրեժ—*թ. տուշ* 50×36

### ՍԱՐՅԱՆ Մ. Ս.

(Ժող. նկարիչ, կրկնակի շքանշանակիր)

168. Օդաչու Պատրիկ Գազազյանի դիմանկարը

Նկարիչների բրիգադա՝

ՍԱՐՅԱՆ Մ. Ա. (ժող. նկարիչ, կրկնակի շքանշանակիր)
ԽՍԱՅԱՆ Խ. Ա.
ՔՈՉՈՅԱՆ Բ. Ա.

169. Մոսկվայի պաշտպանության համար—*պաննո կտ. դ.* 200×300

## ՍԻՄՈՆՅԱՆ Կ. Ս.

170. Պարտիզաններ—*կտ. յուղ.* 76×85

## ՍԻՄՈՆՅԱՆ Պ. Հ.

171. Հրաժեշտ—*կտ. յուղ.* 94×102
172. Ի. Վ. Ստալինը, Կ. Ե. Վորոշիլովը և Ս. Մ. Բուդյոննին Ցարիցինի ճակատում—*կտ. յուղ.* 37×90

## ՍՈՂՈՄՈՆՅԱՆ Պ. Գ.

173. Ընկեր Ստալինի դիմանկարը—*կտ. յուղ.* 86×83
174. Ընկեր Վորոշիլովի դիմանկարը —*կտ. յուղ.* 84×68
175. Տանկային գրոհ—*կտ. յուղ.* 85×77

## ՍՏԵՓԱՆՅԱՆ Կ.

176—188. Կարմիր բանակի հրամանատարների ու մարտիկների դիմանկարներ—*թ. մատ.* 30×20

## ՍՏԵՓԱՆՅԱՆ Ա. Լ.

189. Հանուն հայրենիքի—*գիպս* 130×65×80

## ՍՏԵՓԱՆՅԱՆ Ս. Լ.

(Արվեստի վաստ. գործիչ, շքանշանակիր)

190. Ընկեր Վորոշիլով—*գիպս*, *հոքիդ* 58×15×15

191. Դեպի պարտիզաններր—*հոքիդ*, *գիպս* 45×31×18

## ՎԱՐԴԱՆՅԱՆ Է.

192. Գրոհ—*գիպս*

## ՏԱՐԱԳՐՈՍ

193. Բանակայինները քողարկում են հրանոթը—*մատ.* 30×40

194. Գնդացրորդը դիրքում—*մատ.* 30×40

195. Հետախույզ—*թ. մատ.* 30×40

196. Խրամատում—*թ. մատ.* 30×40

## ՏԻՐԱՏՈՒՐՅԱՆ Մ. Մ.

197. Պատրաստում են տաք հագուստ Կարմիր բանակի համար—*կտ. յուղ.* 68×83

198. Հերոսուհի—*կտ. յուղ.* 62×53

## ՈՒՐԱՐՏՈՒ Ա․

199․ Վրեժի երդում—*պլաստելին* 45×17×15

## ՔՈՒԼՈՋՅԱՆ Բ․ Ա․

200․ Պարտիզանների հարձակումը թշնամու մարտկոցի վրա—*կտ․ յուղ․* 68×94

201․ Հեծելազորի զրոհը—*կ․ պ․* 32×67

## ՔՈՉԿԱՆՅԱՆ Վ․

202․ Մենք կհատուցենք—*գիպս* 38×16×27

Նկարիչների բրիգադա՝

ՇԱՔԱՐՅԱՆ Ա․ Ն․ (շքանշանակիր)
ՄԻՐԶՈՅԱՆ Ա․ Օ․

203․ Առա՛ջ, մեր հաղթանակի համար—*պաննո*, *կտ․ յուղ․* 195×450

## ՖԵՐՄԱՆՅԱՆ Գ․

204․ Մարտից առաջ մտնում են պարտիզայի շարքերը—*կտ․ յուղ․* 65×75

ՎՖ 535, տիրաժ 160, պատվեր № 522
Ստորագրված է տպագրության 8/1 1942

Պետքաղհրատի տպարան, Երևան. Ալլահվերդյան № 65

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0036953

-24

А I/2923

Пров.